ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ

ՎԵՐԻՆ ԴՎԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ

ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ N – 5 -Ն

10.02.2017 թ.

ՎԵՐԻՆ ԴՎԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,, Տեղական Ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 14 -րդհոդվածի 6 -րդ կետի դրույթներով ավագանին որոշում է՝ Հաստատել Վերին Դվին համայնքի ավագանու թիվ 2 նիստի օրակարգը:

1. Վերին Դվին համայնքի 2017 թվականի տեղական տուրքերի դրույքաչափերը սահմանելու և Վերին Դվին համայնքի 05.12.2016 թվականի թիվ 5-Ն որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին :
2. Համայնքային սեփականություն հանդիսացող 17,0 հա վարելահողի և 30,0 հա արոտավայրի հողամասերից մրցութային եղանակով բնակիչներին տրամադրելու մասին:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

1.Ա. Պետրովա-

2. Ս. Թամրազյան

3.Ի. Դինխոն -

4. Մ. Լազարևա-

5. Ս. Միխայլով-

6. Մ. Բաղալովա-

7. Ա. Աբրամով-

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Լ. Պետրովա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ

ՎԵՐԻՆ ԴՎԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ

ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ N 6-Ն

10.02.2017թ.

ՎԵՐԻՆ ԴՎԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ և ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ և ՎԵՐԻՆ ԴՎԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 05.12.2016 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 15 –Ն ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական Ինքնակառավարման մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 18-րդ կետի պահանջներով և << Իրավական ակտերի մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 72 –րդ հոդվածի դրույթներով ավագանին որոշում է .

1. Հաստատել Վերին Դվին համայնքի 2017թ. համար տեղական տուրքերը վճարները համաձայն հավելվածի :

2. ՈՒԺը կորցրած ճանաչել Վերին Դվին համայնքի ավագանու 15 դեկտեմբերի 2016 թվականի „ Վերին Դվին համայնքի տեղական տուրքերը և վճարները սահմանելու մասին „ թիվ 15 –Ն որոշումը:

Ավագանու անդամներ՝

1.Անյա Պետրովա-

2.Սոնիկ Թամրազյան –

3.Մարիյա Լազարևա –

4. Մարիաննա Բաղալովա-

5. Սերգեյ Միխայլով-

6.Արայիկ Աբրամով-

7. Իոսիֆ Դինխոն-

ՀԱՍԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Լ. Պետրովա

Հավելված 1
Վերին Դվին համայնքի ավագանու
2017 թվականի փետրվարի 10 –ի թիվ 6-Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՎԵՐԻՆ ԴՎԻՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՍԱՀՄԱՆՎԱԾ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների (ներառյալ՝ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝

Հիմնական օբյեկտների համար՝

ա) մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ 15 000 դրամ.

բ) սույն կետի ,աե ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝

բա) 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 30 000 դրամ,

բբ) 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 50 000 դրամ .

բգ) 1001-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 50 000 դրամ,

բդ) 3001-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 100 000 դրամ.

Ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

գ) մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 3000 դրամ,

դ) 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 5000 դրամ:՝

Սահմանված դրույքաչափերը հաշվարկել 0,5 գործակցի կիրառմամբ:

1. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման, աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ 3000 դրամ.

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է 5000 դրամ:

4. Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝

1. Ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 10 000 դրամ.

բ. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 10 001 դրամ.

գ. 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 13 001 դրամ.

դ. 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 21 000 դրամ.

ե. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 26 000 դրամ.

զ. 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 46 000 դրամ:

2.Ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 10 000 դրամ.

բ. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 10 001 դրամ.

գ. 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 13 001դրամ.

դ. 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 21 000 դրամ.

ե. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 26 000 դրամ.

զ. 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 46 000 դրամ:

5. Համայնքի տարածքում՝

ա) բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար 350 դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար.

բ) հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և (կամ) սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 200 000 դրամ.

6. Համայնքի տարածքում՝ առևտրի օբյեկտներին ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել 50 000 դրամ.

7. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանվում է՝

ա) ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 2000 դրամ.

բ) թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 3500 դրամ.

գ) այլ արտաքին գովազդի համար՝ 1500 դրամ.

ե) սոցիալական գովազդի համար՝ 375 դրամ:

8. Համայնքի տարածքում մարդատար- տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար յուրաքանչյուր մեքենայի համար՝ սահմանվում է 10 000 դրամ:

Սահմանված դրույքաչափերը հաշվարկել 0,3 գործակցի կիրառմամբ:

ՎԵՐԻՆ ԴՎԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1 . Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 1000 դրամ:

2. Համայնքի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու , Հետ վերձնելու և վարձակալության տրամադրելու դեպքում անհրաժեշտ չափագրական և այլ նման աշխատանքների համար տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոդհատուցման վճար սահմանել 400 դրամ :

3. Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մրցույթներ կազմակերպելու հետ կապված մասնակիցներից մուտքավճար սահմանել 1000 դրամ

4. Սահմանել աղբահանության վճար յուրաքանչյուր բնակչից ամսեկան 0 դրամ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Լ. Պետրովա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ

ՎԵՐԻՆ ԴՎԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ

ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ N 7-Ն

10.02.2017 թվական

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 17,6 հա ՎԱՐԵԼԱՀՈՂԻ և 30,0 հա ԱՐՈՏԱՎԱՅՐԻ ՀՈՂԱՄԱՍԵՐԻՑ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ԲՆԱԿԻՉՆԵՐԻՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով « Տեղական Ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18 –րդ հոդվածի 21 –րդ կետը ավագանին որոշեց.

Համայնքային սեփականություն հանդիսացող 17,6 հա վարելահողը և 30, 0 հա արոտավայրը մրցութային եղանակով վարձակալության հանձնել, որից՝

ա/. 4-րդ կարգի հողամասը Ուրց Կոտայք Շամիրամ գոտում մեկնարկային գինը սահմանել զուտ եկամտի 30% չափով, որը կկազմի 1,0 հա-ի հաշվով 14200 դրամ:

բ/ 2-րդ կարգի Մերձ Արաքսյան գոտում մեկնարկային գինը սահմանել զուտ եկամտի 30% չափով, որը կկազմի 1,0 հա-ի հաշվով 53760 դրամ:

գ/ 5 -րդ կարգի հողամասը Ուրց Կոտայք Շամիրամ գոտում մեկնարկային գինը սահմանել զուտ եկամտի 30% չափով, որը կկազմի 1,0 հա-ի հաշվով 4380 դրամ:

դ/ 3 -րդ կարգի Մերձ Արաքսյան գոտում մեկնարկային գինը սահմանել զուտ եկամտի 30% չափով, որը կկազմի 1,0 հա-ի հաշվով 36540 դրամ:

2 . Թույլատրել համայնքի ղեկավարին օրենքով սահմանված կարգով կնքել վարձակալության պայմանագրերը մեկ տարի ժամկետով:

Ավագանու անդամներ

1.Անյա Պետրովա-

2.Սոնիկ Թամրազյան –

3.Մարիյա Լազարևա –

4. Մարիաննա Բաղալովա-

5. Սերգեյ Միխայլով-

6.Արայիկ Աբրամով-

7. Իոսիֆ Դինխոև-

Համայնքի ղեկավար Լ. Պետրովա